Տնօրեն՝ « 01 » 09 2023 թ.

Ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Հ.Գալստյանի անվան հ. 83 ավագ, 10Զ

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Կարապետյան Մարիամ Ռոբերտի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) 10[7] դասարանում սովորում են 13 աշակերտ՝ 3 տղա, 10 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, սովորողները հարգալից են ուսուցիչների և միմյանց նկատմամբ: Աշակերտները դաստիարակված են, բարեկիրթ, համախմբված և համերաշխ, հիմնականում ցուցաբերում են բարձր առաջադիմություն:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Հետևել կարգապահությանը, դասարանի մաքրությանը, սանիտարահիգիենիկ վիճակին:
2. Ստեղծել դասարանական անկյուն (դասացուցակ, հերթապահության ցուցակ):
3. Հիմնական պահանջներն են՝ առաջադիմության բարձրացումը, դասերից բացակայությունը հասցնել նվազագույնի, անձի ճիշտ ձևավորման նպատակը:
4. Անհրաժեշտորեն ապահովել ուսուցիչ-ծնող-դպրոց կապը:
5. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների հիմքում դնել աշաակերտների կարողությունների և հմտությունների զարգացումը, մշակութային զարգացածությունը, աշխարհայացքի և շրջակա աշխարհի մասին ճիշտ պատկերացումը և ունակությունները հարստացնելու խնդիրները:
6. Կազմակերպել միջոցառումներ, նշել հիշարժան տարեթվերը:
7. Կազմակերպել էքսկուրսիաներ, այցելել ցուցահանդեսներ, պատկերասրահներ, այլ մշակութային կենտրոններ:
8. Անցկացնել զրույցներ ուսուցման, կյանքի, մասնագիտական կողմնորոշման, ինքնադաստիարակման, մեծերի և փոքրերի և հասակակիցների փոխհարաբերությունների հարցերի շուրջ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Իմանալ սովորողների հոգեբանական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դասապրոցեսի հիմքում կարևորել սովորողի հայեցի դաստիարակությունը. նա պետք է գիտակցի, որ ինքը հայկական պատմամշակութային արժեքների կրողն ու ժառանգորդն է և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում: Նպաստել սովորողների աշխարհայացքի զարգացմանը, հայ առաքելական եկեղեցու նկատմամբ հավատին, նրա պատմությանն ու դերին:

3.2 Գեղագիտական դաստիրակություն

Սովորողը պետք է դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթների իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում: Էքսկուրսիաների, ներկայացումների այցելությամբ և ընթերցանությամբ նպաստել ճաշակի ձևավորմանը, գեղեցիկը տեսնելու, զգալու և արարելու ձգտմանը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիրակություն

Հայրենիքի պատմության և նրա պաշտպանության վերաբերյալ դաստիարակել պատասխանատվություն, սեր, նվիրվածություն:
Վերլուծել Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում. սովորողը պետք է արձագանքի դրանց՝ որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի:

3.4 Ֆիզիկական դաստիրակություն

Նպաստել սովորողների ֆիզիկական դաստիրակության զարգացմանը՝ ճարպկություն, դիմացկունություն, ուժ(ֆիզկուլտուրայի դասաժամերին և արտադասարանական միջոցառումներին). նրանք պետք է վարեն առողջ և անվտանգ ապրելակերպ: Ամրագրել նրանց մարզական հաջողությունները, խրախուսել:

3.5 Աշխատանքային դաստիրակություն

Բարձրացնել սովորողների աշխատանքային ակտիվությունը և բարեխիղճ վերաբերմունքը հանձնարարված գործի նկատմամբ: Նպաստել աշխատանքի նկատմամբ սիրո և խնայողության զգացմանը և ինքնասպասարկման կարողությանը:

3.6 Բնապահպանական դաստիրակություն

Սովորողների գիտակցությանը հասցնել բնության կարևորության, նրա խնայողության և պահպանության անհրաժեշտությունը: Ներարկել սեր և հոգածություն բնության հանդեպ: Զարգացնել բնապահպանության խնդիրները՝ հոգատարություն ծառ ու ծաղկի, կենդանական աշխարհի նկատմամբ: Ակտիվ մասնակցություն ցուցաբերել շաբաթօրյակներին և դպրոցում ստեղծվող պուրակի ծառատունկին, խնամել և պահպանել ծառերը:

4. Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել դպրոց – ընտանիք կապը՝ որպես անառարկելի անհրաժեշտություն (դասղեկ- ուսուցիչ – ծնող փոխըմբռնմամբ): Ծնողի հետ համագործակցել կրթադաստիարակչական բոլոր հարցերում, հրավիրել դպրոց: Տեղյակ լինել սովորողի ընտանեկան վիճակին, խնդիրներին և կենցաղային պայմաններին: Անցկացնել ծնողական ժողովներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիրակչական աշխատաքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
	Դպրության և գիտելիքի օր: Զրույց նոր ուսումնական տարվա խնդիրների և անելիքների մասին:	01. 09. 23թ.	Դասղեկ
I	Քննարկել աշակերտի վարքի կանոնները, դպրոցի պահանջները.աշակերտների պահվածքը, ուսուցիչների և տնօրինության հանձնարարությունների կատարման անհրաժեշտությունը:	08. 09. 23թ.	Դասղեկ
II	Դասարանական ժողով. ընտրել ավագ, դասարանական ակտիվ: Կազմել հերթապահության գրաֆիկ:	15. 09. 23թ.	Դասղեկ
III	Զրույց՝ « Հայաստանի անկախության տոն» թեմայով:	22. 09. 23թ.	Դասղեկ, պատմ. ուսուցիչ
IV	44- օրյա պատերազմից 2 տարի անց	29. 09. 23թ.	Դասղեկ
V	Զրույց՝ « Ուսուցիչ, ում միշտ կհիշեմ» խորագրով:	06. 10. 23թ.	Դասղեկ
VI	Քննարկում՝ « Իմ նախընտրած մասնագիտությունը և բուհը» թեմայով: Պարզել, թե աշակերտների մասնագիտական կողմնորոշումը որքանով է համապատասխանում նրանց նախասիրություններին. արդյոք ճիշտ են ընտրել իրենց ապագա մասնագիտությունը:	13. 10. 23թ.	Դասղեկ, աշակերտներ
VII	Դասարանը ընդգրկել հասարակական-հանրօգուտ աշխատանքների մեջ:	20. 10. 23թ.	Դասղեկ, աշակերտներ
VIII	Տանել անհատական աշխատանք՝ ներդաշնակ մթնոլորտ ստեղծելու, փոխադարձ վստահություն ու հարգանք ամրապնդելու համար:	03. 11. 23թ.	Դասղեկ
IX	Լսել աշակերտների առաջարկությունները, կարծիքները և ծրագրերը:	10. 11. 23թ.	Դասղեկ, աշակերտներ
X	Այցելել Փարաջանովի տուն-թանգարան:	17. 11. 22թ.	Դասղեկ
XI	Կատարել դասալսումներ տարբեր առարկաներից: Քննարկել սովորողների առաջադիմությունը :	24. 11. 23թ.	Դասղեկ
XII	«Մարդու իրավունքների պաշտպանության օր» թեմայով զրույց:	01. 12. 23թ.	Դասղեկ
XIII	Մրագիտության դաս.« Ինչպես վերլուծել տեղեկությունեդիազները »: https://www.boonus.am/lesson/67	08. 11. 23թ.	Դասղեկ
XIV	Գիտելիքների որակի և առաջադիմության հարցերի քննարկում:	15. 12. 23թ.	Դասղեկ

XV	Նախապատրաստվել պետական ավարտական քննությունների I փուլին:	22. 12. 23թ.	Դասղեկ
XVI	I կիսամյակի ամփոփիչ գնահատականների ամփոփում:	12. 01. 24թ.	Դասղեկ
XVII	II կիսամյակի խնդիրների և անելիքների քննարկում:	19. 01. 24թ.	Դասղեկ
XVIII	Քննարկել կարգապահական հարցեր:	26. 01. 24թ.	Դասղեկ
XIX	Բանակի օրվան նվիրված թեմատիկ զրուց:	02. 02.24թ.	Դասղեկ, ՆԶՊ-ի ուսուցիչ
XX	Զրույց լավ և վատ սովորույթների վերաբերյալ:	09. 02. 24թ.	Դասղեկ
XXI	Մասնակցություն օլիմպիադաներին:	16. 02. 24թ. ուստարվա ընթացքում	Դասղեկ
XXII	Հետևել աշակերտների կանոնավոր հաճախումներին, վարքագծին:	23. 02. 24թ.	Դասղեկ
XXIII	Զրույց՝ « Գիրք և ընթերցանություն»:	01. 03. 24թ.	Դասղեկ
XXIV	Ծանոթացում արտակարգ իրավիճակներում տարհանման կանոններին :	07. 03. 24թ.	Դասղեկ, ՆԶՊ-ի ուսուցիչ
XXV	Մարտի 8. Կանանց միջազգային օր:	15. 03. 24թ. ուստարվա ընթացքում	Դասղեկ
XXVI	Կազմակերպել այցելություն մշակութային կենտրոններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ:	22. 03. 24թ. ուստարվա ընթացքում	Դասղեկ, ուսուցիչներ
XXVII	Հրավիրել ծնողական ժողովներ:	05. 04. 24թ.	Դասղեկ, ուսուցիչներ
XXVIII	« Գնահատենք մեր ժամանակը» թեմայով քննարկում:	12. 04. 24թ.	Դասղեկ
XXIX	Ժամանակակից տեղեկատվական միջոցների արդյունավետ օգտագործումը:	19. 04. 24թ. կիսամյակի ընթացքում	Դասղեկ
XXX	Մասնակցել դպրոցական և համաքաղաքային շաբաթօրյակներին:	26. 04. 24թ.	Դասղեկ, աշակերտներ
XXXI	Գիտելիքների որակի և առաջադիմության հարցերի քննարկում:	03. 05. 24թ.	Դասղեկ, աշակերտներ
XXXII	Զրույց՝ « Մայիսյան հերոսամարտերը» թեմայով:	10. 05. 24թ.	Դասղեկ
XXXIII	II կիսամյակի ամփոփիչ գնահատականների ամփոփում:	17. 05. 23թ.	Դասղեկ, աշակերտներ
XXXIV	Նախապատրաստվել փոխադրական քննություններին:	24. 05. 23թ.	Դասղեկ, ուսուցիչներ